

Հաստատված է

Հայաստանի Հանրապետության պետական
կառավարման ակադեմիայի գիտական խորհրդի
2019 թվականի մայիսի 31-ի
նիստում (արձանագրություն N 6):

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
«ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ» ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ**

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի (այսուհետ՝ Ակադեմիա) «Հանրային կառավարում» գիտական հանդեսի (այսուհետ՝ Հանդես) հրատարակության կանոնակարգը սահմանում է Հանդեսի կազմակերպական կառուցվածքը, տեխնիկական և բովանդակային պահանջները, ինչպես նաև կարգավորում է հրատարակման աշխատանքների կազմակերպումը:

2. Սույն կանոնակարգի իրավական հիմքերն են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին», «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքները, Ակադեմիայի կանոնադրությունը և այլ իրավական ակտեր:

3. Հանդեսի անվանումն է՝

1) հայերեն՝ «Հանրային կառավարում» գիտական հանդես.

2) ռուսերեն՝ «Публичное управление» научный журнал.

3) անգլերեն՝ «Public Administration» Scientific journal:

4. Հանդեսի հիմնադիրն է «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (պետական գրանցման համարը՝ 264.210.05880):

5. Հանդեսն ընդգրկված է Հայաստանի Հանրապետության բարձրագույն որակավորման կոմիտեի (ՀՀ ԲՈԿ) սահմանած դոկտորական և թեկնածուականատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ընդունելի պարբերական գիտական հրատարակությունների ցանկում:

6. Հանդեսն ունի «Հանրային կառավարում», «Տնտեսագիտություն և կառավարում», «Իրավագիտություն», «Քաղաքագիտություն» և «Հոգեբանություն» բաժինները, և հանդեսում հրատարակվող հեղինակային նյութերը կարող են լինել նաև նշված բաժինների միջնորդային տիրույթում:

7. Հանդեսում կարող են ընդգրկվել հետևյալ հրատարակումները՝

1) տեսական և կիրառական հետազոտությունների արդյունքներ ներկայացնող հոդվածներ.

- 2) գիտական զեկույցներ.
- 3) գիտաժողովների, սիմպոզիումների և սեմինարների նյութեր.
- 4) գիտամեթոդական հետազոտություններ.
- 5) գիտական ակնարկներ և գրախոսականներ.
- 6) հաղորդումներ նոր գրականության և գիտական միջոցառումների մասին:

8. Նյութերը հրապարակվում են հայերեն, ռուսերեն կամ անգլերեն և ուղեկցվում են հեղինակային ամփոփագրերով՝ նշված երեք լեզուներով:

9. Հանդեսը լույս է տեսնում տպագիր և էլեկտրոնային տարբերակներով՝ տարեկան երկու անգամ: Հրապարակման/թողարկման պարբերականությունը և տպագրության ծավալը չեն սահմանափակվում:

10. Հանդեսում հրապարակվող նյութերը պետք է երկկողմանի «կույր» գրախոսվեն: Հանդեսին ներկայացված նյութերը հրապարակվում են միայն դրական գրախոսության առկայության դեպքում:

11. Գրախոսման ընթացակարգը սահմանվում է «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի «Հանրային կառավարում» գիտական հանդես ներկայացվող բնագրերի նախնական ստուգման և գրախոսման կարգով»:

12. Հրապարակման համար ուղարկվող բնագրերին ներկայացվող ձևավորման պահանջները սահմանվում են «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի «Հանրային կառավարում» գիտական հանդես ներկայացվող բնագրերի ձևավորման և ներկայացման կանոններով»:

13. Հրապարակվող նյութի հրապարակումը մերժվում է, եթե այն՝

- 1) չի համապատասխանում Հանդեսի մասնագիտական ուղղվածությանը.
- 2) չի համապատասխանում «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի «Հանրային կառավարում» գիտական հանդես ներկայացվող բնագրերի ձևավորման և ներկայացման կանոններին».

3) (կամ դրա մի մասը) եղել է նախկինում հրապարակված.

4) բացասական է գնահատվել գրախոսի կողմից.

5) պարունակում է հատվածներ, որոնցում հեղինակը չի պահպանել հեղինակային իրավունքի մասին կամ այլ իրավական ակտերի պահանջները:

14. Հեղինակների հետ, որոնց նյութերում հայտնաբերվել է գրագողություն, Հանդեսը դադարեցնում է համագործակցությունը:

15. Հոդվածների հրապարակումը Հանդեսում կատարվում է անվճար և վճարովի հիմունքներով:

16. Նյութերը հրապարակվում են անվճար, եթե դրանց հեղինակները (համահեղինակները)՝

1) Հանդեսի խմբագրական խորհրդի անդամ են կամ խմբագրության ներկայացուցիչ,

2) Ակադեմիայի աշխատող, դոկտորանտ, ասպիրանտ, հայցորդ կամ մագիստրանտ են,

3) Ակադեմիայի հետ համապատասխան պայմանագիր ունեցող և դրա հիման վրա համագործակցող հայաստանյան կամ օտարերկրյա բուհի դասախոս, դոկտորանտ, ասպիրանտ կամ հայցորդ են:

17. Սույն կանոնակարգի 16-րդ կետում չընդգրկված հեղինակների (համահեղինակների) բնագրերը հրապարակվում են վճարովի հիմունքներով:

18. Նյութերի հրապարակման վճարի չափը սահմանվում է «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի «Հանրային կառավարում» գիտական հանդես ներկայացվող բնագրերի ձևավորման և ներկայացման կանոններով»:

19. Եթե բնագրի որոշ համահեղինակներ ընդգրկված են սույն կանոնակարգի 16-րդ կետում նշված խմբերում, իսկ մյուսները՝ ոչ, ապա համահեղինակները վճարում են հրապարակման համար սահմանված վճարի 50 տոկոսը:

20. Նյութերի հեղինակներին հոնորար չի վճարվում:

2. ՀԱՆՂԵՍԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

21. Հանդեսի կառավարման մարմիններն են՝ խմբագրական խորհուրդը, գլխավոր խմբագիրը և խմբագրական վարչանին (այսուհետ՝ վարչանի):

22. Գլխավոր խմբագիրը, վարչանին և Հանդեսի հրատարակչական աշխատանքներում անմիջականորեն ներգրավված Ակադեմիայի աշխատակիցները կազմում են խմբագրությունը:

23. Խմբագրական խորհուրդն ունի նախագահ: Խմբագրական խորհրդի կազմը ձևավորվում է հայտնի գիտնականներից (այդ թվում՝ օտարերկրյա), ՀՀ հանրային իշխանության, օտարերկրյա պետությունների, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներից:

24. Խմբագրական խորհրդի կազմը հաստատում է Ակադեմիայի ռեկտորը:

25. Խմբագրական խորհուրդն աջակցում է գլխավոր խմբագրին և վարչանուն Հանդեսի խմբագրական քաղաքականության մշակման և հրապարակվող նյութերի թեմատիկայի արդիականության գնահատման գործում:

26. Խմբագրական խորհրդի նիստերը գումարվում են խմբագրական խորհրդի նախագահի կողմից ըստ անհրաժեշտության՝ սեփական նախաձեռնությամբ կամ անդամների, գլխավոր խմբագրի և/կամ վարչանու առաջարկությամբ:

27. Խմբագրական խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, բաց քվեարկությամբ:

28. Խմբագրական խորհրդի անդամն իրավունք ունի՝

- 1) ծանոթանալու հրապարակման ներկայացված նյութերին,
- 2) կարծիք հայտնելու հրապարակման ներկայացված նյութերի վերաբերյալ,
- 3) մասնակցելու Հանդեսի գովազդմանը և վերջինիս հանրաճանաչության բարձրացմանն ուղղված միջոցառումներին:

29. Ակադեմիայի ռեկտորն ի պաշտոնե Հանդեսի գլխավոր խմբագիրն է:

30. Վարչանու կազմը (պատասխանատու քարտուղար, խմբագիր և անդամներ) հաստատվում է Ակադեմիայի ռեկտորի հրամանով:

31. Հանդեսի հրապարակման կազմակերպչական ղեկավարումն իրականացնում է գլխավոր խմբագիրը, իսկ հրապարակման կազմակերպման աշխատանքները՝ վարչանին:

32. Հանդեսի գլխավոր խմբագիրը՝

- 1) որոշում է Հանդեսի ռազմավարությունը,
- 2) ղեկավարում է վարչանու աշխատանքները,
- 3) որոշում է գրախոսներին,
- 4) ուղարկում է բնագրերը գրախոսման և հետևում գրախոսման ժամկետների պահպանմանը,

5) մակագրում է Հանդեսը՝ կատարելով «հանձնել տպագրության» նշագրումը և թույլատրում վերջինիս տարածումը,

6) սահմանում է տպաքանակը և յուրաքանչյուր համարի առաքման ցանկը,

7) իրականացնում է սույն կանոնակարգով սահմանված այլ լիազորություններ:

33. Հանդեսի վարչանու անդամները յուրաքանչյուր գրախոսված բնագրի համար կարող են հայտնել հետևյալ կարծիքներից որևէ մեկը.

- 1) բնագիրը ենթակա է հրապարակման.
- 2) բնագիրը ենթակա է հրապարակման՝ միայն հեղինակի կողմից լրամշակվելուց հետո.
- 3) բնագիրը հրապարակման ենթակա չէ:

Սույն կետի վերաբերյալ վերջնական որոշումն ընդունում է գլխավոր խմբագիրը:

34. Խմբագրությունը կարող է չկիսել հեղինակների կարծիքը և հրապարակված ոչ հավաստի տվյալների դեպքում պատասխանատվություն չի կրում:

35. Խմբագրությունն ուղարկված նյութերը, ինչպես հրապարակվելու, այնպես էլ չհրապարակվելու դեպքում հեղինակներին չեն վերադարձվում:

36. Չի թույլատրվում խմբագրությունն ուղարկել նախկինում հրապարակված կամ հրապարակման համար այլ հանդեսներ ուղարկված բնագրեր:

3. ՀԱՆԴԵՍԻ ՀԱՄԱՐՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

37. Հանդեսի յուրաքանչյուր համարում անհրաժեշտ է նշել հետևյալ տվյալները՝

- 1) հանդեսի անվանումը,
- 2) հիմնադրի անվանումը,
- 3) հրատարակչության անվանումը,
- 4) խմբագրական խորհրդի և վարչանու անհատական կազմը,
- 5) գլխավոր խմբագրի անուն, ազգանունը,
- 6) թողարկման համարը և տպագրության հանձնելու օրը, ամիսը, տարին,

- 7) դասիչը,
- 8) տպաքանակը,
- 9) խմբագրության, տպարանի հասցեները,
- 10) գրանցման համարը և պետական գրանցման վկայականի համարը,
- 11) ISSN համարանիշը,
- 12) բնագրերի ձևակերպման և ներկայացման պահանջները:

4. ՀԱՆՂԵՍԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԱՌԱՔՈՒՄԸ

38. Հանդեսը հրապարակվում է Ակադեմիայի միջոցների հաշվին:

39. Հրապարակման համար հեղինակներից ստացված միջոցներն օգտագործվում են Հանդեսի հրապարակման և իրացման հետ կապված նյութական ծախսերի հատուցման, ինչպես նաև Ակադեմիայի կանոնադրությամբ նախատեսված այլ նպատակներով:

40. Ֆինանսական միջոցները կարող են գոյանալ նաև հատավաճառից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված աղբյուրներից գոյացող միջոցներից:

41. Հանդեսը պետք է առաքվի Հայաստանի ազգային գրապալատ, Հայաստանի ազգային գրադարան, մասնագիտական և գիտական գրադարաններ: Այն կարող է նաև առաքվել հանրային կառավարման մարմիններ, գիտական և կրթական հաստատություններ, ինչպես նաև այլ կազմակերպություններ, որոնք ներառված են առաքման ցանկում:

42. Հրապարակված Հանդեսի էլեկտրոնային տարբերակները տեղադրվում են Ակադեմիայի պաշտոնական կայքում:

5. ՀԱՆՂԵՍԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԿԱՍԵՑՈՒՄԸ ԵՎ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

43. Հանդեսի հրապարակումը կարող է կասեցվել կամ դադարեցվել Ակադեմիայի գիտական խորհրդի որոշմամբ կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով: